ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2021թ. N ------ - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման N 1 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին գլխի 3-րդ կետի «Առևտրի և սպասարկումների վարչություն» բառերը փոխարինել «Առևտրի և ծառայությունների վարչություն» բառերով,

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին գլուխը լրացնել նոր 23-րդ կետով՝ «23) Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն»,

գ. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 3-րդ գլխի 3-րդ՝ «Զորահավաքային բաժին» կետը,

դ. «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ (բացառությամբ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների) գլխի 1-ին բաժիններ մասի «1) Առևտրի, սպասարկումների և գովազդի բաժին» բառերը փոխարինել «Առևտրի, ծառայությունների և գովազդի բաժին» բառերով, իսկ Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ գլխի 1-ին բաժիններ մասի «1) Առևտրի, սպասարկումների բաժին» բառերը փոխարինել «Առևտրի և ծառայությունների բաժին» բառերով:

2) Որոշման N 2 հավելվածում՝

ա. «Ղեկավարություն» գլխի 3-րդ, 9-րդ և 12-րդ տողերի 3-րդ սյունակի «3», «4» և «3» թվերը փոխարինել համապատասխանաբար «4», «5» և «4» թվերով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «29» թիվը փոխարինել «32» թվով,

բ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Անշարժ գույքի կառավարման վարչություն» գլխի 3-րդ և 18-րդ տողերի 3-րդ սյունակի «1» և «4» թվերը համապատասխանաբար փոխարինել «2» և «5» թվերով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «29» թիվը փոխարինել «31» թվով,

գ. «Ի.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Առողջապահության վարչություն» գլխի 5-րդ տողի 3-րդ սյունակի «1» թիվը փոխարինել «2» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «10» թիվը փոխարինել «11» թվով,

դ. «Ի.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում «Առևտրի և սպասարկումների վարչություն» բառերը փոխարինել «Առևտրի և ծառայությունների վարչություն» բառերով, իսկ 3-րդ տողի 3-րդ սյունակի «3» թիվը փոխարինել «4» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «17» թիվը փոխարինել «18» թվով,

ե. ուժը կորցրած ճանաչել «Ի.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Զորահավաքային բաժին» գլուխը,

զ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժին» տողից առաջ ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր «Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն» գլուխը հետևյալ բովանդակությամբ.

1.1	**Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն**	
1	վարչության պետ	1
2	վարչության պետի տեղակալ	1
3	գործավար	1
	Պլանավորման, զորակոչային հարցերի և զորահավաքային բաժին	
4	բաժնի պետ	1
5	գլխավոր մասնագետ	2
6	առաջատար մասնագետ	2
	Քաղաքացիական պաշտպանության բաժին	
7	բաժնի պետ	1
8	գլխավոր մասնագետ	1
9	առաջատար մասնագետ	1
10	առաջին կարգի մասնագետ	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	12

է. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Գործերի կառավարման և սպասարկման վարչություն» գլխի 20-րդ տողի 3-րդ սյունակի «7» թիվը փոխարինել «8» թվով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «106» թիվը փոխարինել «107» թվով,

ը. «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցներ» բաժնի 2.1 - 2.5 և 2.7- 2.12 տողերի բոլոր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերում «Առևտրի, սպասարկումների և գովազդի բաժին» բառերը փոխարինել «Առևտրի, ծառայությունների և գովազդի բաժին» բառերով, իսկ 2.6 տողի «Առևտրի և սպասարկումների բաժին» բառերը փոխարինել «Առևտրի և ծառայությունների բաժին» բառերով:

2. Սույն որոշմամբ նախատեսվող հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշմամբ նախատեսված ամսական պաշտոնային դրույքաչափերին համապատասխան:

3. Սույն որոշումը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Վերջին ժամանակահատվածում կտրուկ ավելացել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության գործառույթներին առնչվող դիմումները և գրությունները, ինչի պարագայում վարչությունը ներկայումս ունի փաստաթղթաշրջանառության մեծ ծավալներ և աշխատանքային խիստ ծանրաբեռնվածություն:

Կառավարման համակարգի արդիականացման և գործունեության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև աշխատանքային ծանրաբեռնվածությունը հավասարաչափ բաշխելու և իրականացվող գործառույթների կրկնությունները բացառելու համար, ներկայումս աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչությանն անհրաժեշտ են հաստիքային միավորների թվաքանակի ավելացումներ, մասնավորապես՝ մեկ գործավարի և անշարժ գույքի համարակալման, հաշվառման և վերլուծության բաժնում մեկ առաջին կարգի մասնագետի հաստիքներ:

Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) ստեղծվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության հիման վրա: Ծառայության գործունեության նպատակն է իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումը: Ծառայության գործառույթները սահմանված են Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի հ.3658-Ա որոշման հավելված 3-ով հաստատված «Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության» կանոնադրությամբ:

Ծառայության առջև դրված քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման համար պահանջվող ուժերը և միջոցները ստեղծվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության, Երևան քաղաքի բժշկական կազմակերպությունների հիման վրա: Այդ նպատակով բոլոր առողջապահական կազմակերպություններում ստեղծվել են քաղաքացիական շտաբի պետի պաշտոններ, որոնց աշխատանքների համակարգումը դրված է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության վրա:

Ուժեղացված և ռազմական դրության աշխատանքային ռեժիմների փոխադրման ընթացքում առողջապահության վարչությունում կատարվում է հոտնյալ հիմնական պլանային միջոցառումները.

1. Ազդարարուման իրականացում,
2. Անձնակազմի հավաք,
3. Իրադրության մասին իրազեկում, առաջիկա խնդիրների և ներքին պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար պատասխանատուների պարտականությունների ճշգրտում, անհրաժեշտ աշխատակիցների՝ արձակուրդներից և գործուղումներից հետկանչման կազմակերպման հանձնարարում,
4. 3 հերթափոխով 8 ժամյա հերթապահության սահմանում,
5. Ազդարարված լինելու և պլանով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ զեկույց (տեղեկացում)՝ ըստ աստիճանակարգության,
6. Քաղաքացիական պաշտպանության պլանի ճշգրտում,
8. Զորահավաքային պլանի ճշգրտում,
9. Ռազմական գործողությունների վարման շրջաններից ու խոցման կանխատեսվող գոտիներից բնակչությանը տարհանման վայրերում բժշկական և հոգեբանական օգնություն տրամադրող կետերի ծավալման տեղերի ճշգրտում,
10. Բնակչության համար բժշկական հիմնարկների ցանցի ծավալման հաշվարկների ճշգրտում,

11. Վիրավորներին, հիվանդներին և տուժածներին տեղափոխելու և տեղավորելու հաշվարկների ճշգրտում,

12. Բժշկական հիմնարկներն անհրաժեշտ սանիտարատնտեսական գույքով և դեղորայքով պետական պահուստից ստանալու հայտերի հաշվարկների ճշգրտում,

13. Իրադրությամբ պայմանավորված պլանով նախատեսված միջոցառումներից զատ այլ միջոցառումներ իրականացնելու առաջարկների (այ թվում՝ նախագծերի) ներկայացում (ըստ անհրաժեշտության),

14. Իրադրությամբ պայմանավորված պլանով նախատեսված միջոցառումներից զատ իրենց իրավասության շրջանակներում այլ միջոցառումների իրականացում:

Սակայն վերոնշյալ և Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 14-ի հ.3658-Ա որոշմամբ սահմանված գործառույթների համակարգման և իրականացման համար առողջապահության վարչությունը չունի համապատասխան մասնագետ, ուստի՝ առաջարկում եմ առողջապահության վարչությունում ավելացնել 1-ին կարգի մասնագետի հաստիք, ում կողմից կիրականացվեն հետրյալ գործառոյթները.

1. Ապահովի մասնակցությունը.

- Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորմանը և իրականացմանը քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստության բերման ժամանակ,
- Հակառակորդի հարձակման վտանգի և հարձակման ժամանակ բնակչության բժշկական ապահովմանը, տուժած բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպմանը,
- Քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական և հիմնական միջոցառումների ու իրականացման ապահովմանը,
- Ծառայության անձնակազմի և կազմավորումների ազդարարման, հավաքի կազմակերպման, հաշվեցուցակային գույքով ու անհատական պաշտպանության միջոցներով ապահովմանը,
- Այլ ծառայությունների հետ փոխգործակցությունների կազմակերպմանը,
- Կատարած աշխատանքների մասին զեկուցում է վարչության պետին:
- Մասնակցում է շտաբի գործունեությանը, ելնելով իրադրությունից պարբերաբար ճշգրտում է ծառայության պլաններն ու ապահովում դրանց գործողության մեջ դնելը,
- Ծառայության անձնակազմի պատրաստման ընթացիկ միջացառումների պլանավորոմանը և կատարմանը,
- Փոխգործակցությանը քաղաքացիական պաշտպանության այլ ծառայությունների հետ,
- Պատերազմական ժամանակաշրջանում ռազմավարական նշանակության և բնակչության կենսապահովման կազմակերպությունների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումներին,
- Կազմակերպում է ծառայության և կազմավորումների անձնակազմի ազդարարումը և հավաքը.
- Վարչության պետին ներկայացնում է տեղեկատվություն ծառայության կազմավորումների ստեղծման, կառուցվածքի, քանակի, համալրման և հագեցման վերաբերյալ,
- Համակարգում է ծառայության ռազմական դրության պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,
- Խմբավորում, ապահովում և մշտական պատրաստ վիճակում է պահում ծառայության և կազմակերպությունների կազմավորումները,
- Յուրանքանչյուր ամիս համակարգում և ԱԻՆ ներկայացնում Երևան քաղաքի թունավորումների թիվը,
- Յուրանքանչյուր ամիս համակարգում է Երևան քաղաքի շան կծած դեպքերը և ներկայացնում «Թափառող Կենդանիների Վնասազերծման Կենտրոն» ՀՈԱԿ-ին:

«Առևտրի և ծառայությունների մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքների և Երևան քաղաքի ավագանու 25.12.2019թ. թիվ 188-Ն, 24.06.2020թ. թիվ 242-Ն և 243-Ն որոշումների պահանջների համաձայն՝ 2021 թվականից աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչությունը տրամադրում է շրջիկ առևտրի և սահմանափակման ենթակա օբյեկտների գործունեության թույլտվություններ, վերահսկողություն է իրականացնում ինչպես դրանց, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված շրջածախ առևտրի գործունեության նկատմամբ, կատարելու է

իրավախախտ շրջիկ առևտրի կետերի և տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխման աշխատանքներ, Երևանի քաղաքապետի 15.01.2021թ. թիվ 60-Ա որոշման պահանջների համաձայն՝ ստեղծվելու է Երևան քաղաքում գործող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների էլեկտրոնային շտեմարան, որի կատարման հսկողությունը դրված է աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության վրա, անհրաժեշտություն է առաջացել մշակելու առևտրի և ծառայությունների ոլորտի ենթաօրենսդրական ակտեր, ուստի նշված գործընթացներն իրականացնելու և վարչության վրա դրված մյուս գործառույթների կատարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ խնդրում եմ աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության հաստիքացուցակում ավելացնել մեկ գլխավոր մասնագետի հաստիք:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչությունը և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի առևտրի, սպասարկումների և գովազդի բաժինները «Առևտրի և ծառայությունների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջների համաձայն՝ հսկողություն են իրականացնում առևտրի, հանրային սննդի, սահմանափակման ենթակա, հոգեհանգստի և կենցաղային ծառայությունների ոլորտներում: «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի պահանջների համաձայն՝ թույլտվությունները տրամադրվում են նույնպես նշված ծառայությունների իրականացման համար:

Վերոգրյալից բխում է, որ վարչության և վարչական շրջանների համապատասխան ստորաբաժնումների անվանումները չեն համապատասխանում վերը նշված օրենքներով և նորմատիվ-իրավական այլ ակտերով վերջիններին վերապահված գործառույթներին, ուստի խնդրում եմ հանձնարարել Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 10-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և սահմանված «առևտրի և սպասարկումների վարչություն» բառերը շարադրել «առևտրի և ծառայությունների վարչություն» բառերով, իսկ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի «առևտրի, սպասարկումների և գովազդի բաժին» բառերը շարադրել «առևտրի, ծառայությունների և գովազդի բաժին» բառերով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշումը 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Երևանի քաղաքապետարանը համաձայն աշխատանքային ռեժիմների փոխադրման Ներքին պլանի բերվեց ռազմական դրության աշխատանքային ռեժիմի: Ռազմական դրության աշխատանքային ռեժիմում աշխատանքները իրականացնելու ընթացքում պարզ դարձավ, որ Երևանի քաղաքապետարանը ՀՀ պաշտպանության, ՀՀ քաղաքացիական պաշտպանության և Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքներով և այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ պաշտպանությանն, զորահավաքային և քաղպաշտպանությանն առնչվող դրույթները ամբողջ ծավալով համակարգող համապատասխան կառուցվածքային մասնագիտացված ստորաբաժանում չունի, իսկ Աշխատակազմի զորահավաքային բաժինը գործող հաստիքներով (3 հաստիք) ֆիզիկապես չի կարող ապահովել վերոնշյալ օրենքներով սահմանված ինչպես նաև այդ դրույթները իրականացնելու վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման, դրանց վերահսկման, կատարման վերաբերյալ հսկողության սահմանման և ըստ վերադասության զեկույցների ներկայացման ծավալուն աշխատանքները, իսկ խաղաղ ժամանակաշրջանում դրանց նախապատրաստման և պլանավորման գործընթացը:

1. Գործող կանոնադրությամբ և հաստիքացուցակով Զորահավաքային բաժինը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Կազմում է աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին պլանը և իր իրավասության շրջանակներում կորդինացնում է՝ ներքին պլանով նախատեսված միջոցառումների ճիշտ և ժամանակին կատարումը:

2) Կազմում է Երևան քաղաքի տնտեսության զորահավաքի պլանը, իրականացնելով զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված աշխատանքները:

3) Կազմակերպում է զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների հետ՝ եռակողմ պայմանագրեր կնքելու գործընթացը:

4) Պլանավորում և կազմակերպում է առանձնացված շտաբային մարզումները:

5) Ապահովում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների, Երևանի քաղաքային ենթակայության կազմակերպությունների զինվորական հաշվառման և հատուկ զինվորական հաշվառման, պահեստազորայինների ամրագրման աշխատանքները:

2. Առաջարկվող կառուցվածքային փոփոխությունում գործառույթային պարտականությունները բաժանվել է երկու ոլորտների և դրանով է պայմանավորված երկու բաժինների ստեղծումը (ստորև նշված է բաժինների անվանումները և գործառույթային պարտականությունները):

3. Քաղաքապետարանի աշխատակազմում չկա քաղաքացիական պաշտպանության (համայնքային քաղաքացիական պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, տարահանում) հարցերը կորդինացնող ստորաբաժանում, որը էականորեն ազդում է Երևան քաղաքի ԱԻՆ ՓԾ վարչության և Երևանի քաղաքապետարանում քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության ու տարհանման հանձնաժողովների ներդաշնակ աշխատանքի կազմակերպման վրա:

4. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչային և զորահավաքային զորակոչի հարցերը և գործառույթները կենտրոնացնելու՝ մեկ ստորաբաժանման կողմից իրականացնելու նպատակահարմարությունը հաշվի առնելով, Աշխատակազմի առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժնից պարտադիր զինվորական ծառայության զորակոչային գործառույթները առաջարկվում է տալ Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչությանը:

Ելնելով վերոգրյալ հիմնավորումներից առաջարկում եմ՝ Աշխատակազմի զորահավաքային բաժինը վերափոխել ոլորտային մասնագիտացված ծառայության, համալրել հատուկ մասնագիտություն պահանջող հաստիքներով և վերանվանել **Աշխատակազմի Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն**:

Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության ծառայությունը առաջարկվող կառուցվածքով կկարողանա իրականացնել և համակարգել հետևյալ գործառույթները՝ ապահովելով ՀՀ պաշտպանության, ՀՀ քաղաքացիական պաշտպանության և Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքներով սահմանված՝ պաշտպանությանն, զորահավաքային և քաղպաշտպանությանն առնչվող դրույթները և այլ ենթաօրենսդրական ու նորմատիվ ակտերով սահմանված բաց և փակ (գաղտնի) գործառույթները:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ բոլոր աշխատակիցների պաշտոնների համար պարտադիր է գաղտնի փաստաթղթերի հետ աշխատելու և մշակելու թույլատվություն ունենալը:

Պլանավորման, զորակոչային հարցերի և զորահավաքային բաժին

Բաժնի պետ, երկու գլխավոր և երկու առաջատար մասնագետներ կիրականացնեն հետևյալ գործառույթային պարտականությունները՝ միաժամանակ կազմակերպելով և վերահսկելով նույն գործառույթների իրականացումը վարչական շրջաններում.

1. Աջակցելու են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի իրականացմանը և զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրմանը:
2. Աջակցելու են պահեստազորային պատրաստության միջոցառումների իրականացմանը:
3. Աջակցելու են զորահավաքային զորակոչի իրականացմանը:
4. Ապահովելու են զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին քաղաքապետարանի այն աշխատակիցների մասնակցությունը՝ որոնք հաշվառված են ՀՀ ԶՈՒ պահեստազորում:
5. Իրականացնելու են Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների, Երևանի քաղաքային ենթակայության կազմակերպությունների զինվորական հաշվառման և հատուկ զինվորական հաշվառման, պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը:
6. Զորահավաքային (պահեստազորայինների) նախապատրաստության շրջանակներում և զորահավաքային զորակոչի ժամանակ օժանդակում են Երևան քաղաքի Զ և ԶՀԾ ՏՍ-ներին (զինկոմիսարիատներին) զորահավաքային խնդիրների լուծմանը:
7. Աջակցելու են զինված ուժերի զորահավաքային ծավալմանը:

8. Ապահովելու են զորահավաքի ժամանակ զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցման գործընթացը:

9. Զորահավաքային զորակոչի և ավտոմոբիլային տեխնիկայի հավաքագրման, պահեստազորում հաշվառված քաղաքացիների ցուցակների ճշգրտման նպատակով Երևան քաղաքի Զ և ԶՀԾ ՏՍ-ների (զինկոմիսարիատներ) հետ համագործակցություն, աջակցություն:

10. Աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին պլանի կազմում:

11. Սպառնալից ժամանակաշրջանում ներքին պլանով նախատեսված միջոցառումների ճիշտ և ժամանակին կատարման աշխատանքների վերահսկում, տեղեկատվության ամփոփում և զեկույցների պատրաստում ըստ վերադասության:

12. Շտաբային մարզումների պլանավորում և կազմակերպչական հարցերի մշակում:

13. Շտաբային մարզումների անցկացում և ամփոփում:

14. Երևան քաղաքի տնտեսության զորահավաքի պլանի կազմում:

15. Բնակչության կենսապահովման համար նորմավորված պարենային և ոչ պարենային ապրանքների համար հայտերի մշակում, նորմավորված ապրանքների կտրոնների (տալոն) բաշխում, ապրանքների կուտակման և բաշխման համար նախատեսված տարածքներում (պահեստներ, բաշխիչ կետեր) աշխատանքային խմբերի ստեղծում և նախապատրաստում (պարապմունքներ):

16. Քաղաքապետի պահեստային կառավարման կետի հաշվարկների կազմում և աշխատանքների կազմակերպում:

17. Երևան քաղաքի տնտեսության զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված աշխատանքների իրականացում և այդ աշխատանքների կորդինացում:

18. Զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների կորդինացում (եռակողմ պայմանագրերի կնքման գործընթաց, զորահավաքային նախապատրաստություն, օրենքով պահաջվող անհրաժեշտ փաստաթղթային բազայի վարում և ձևայնացված (ֆորմալիզացիոն) փաստաթղթերի ստեղծում):

Քաղաքացիական պաշտպանության բաժին

Բաժնի պետ, մեկ գլխավոր, մեկ առաջատար և մեկ առաջին կարգի մասնագետները կիրականացնեն քաղաքացիական պաշտպանության հարցերով հետևյալ գործառույթային պարտականությունները՝ միաժամանակ կազմակերպելով և վերահսկելով նույն գործառույթների իրականացումը վարչական շրջաններում.

1. Քաղաքացիական պաշտպանության պլանի մշակման և պլանում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով ներկայացնելու են առաջարկություններ, ինչպես նաև մասնակցելու են պլանի ճշգրտումներին:

2. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների աշխատանքների վերահսկում և կորդինացում:

3. Բնակչության իրազեկման համակարգերի մշտական աշխատունակության վերահսկում:

4. Քաղաքապետարանի և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների ազդարարման աղյուսակների կազմում և դրանց կիրառության ապահովում:

5. Պաշտպանական կառույցների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:

6. Աղետի գոտում բնակչության պատսպարման, տարհանման և անհատական միջոցներով ապահովման կազմակերպչական աշխատանքների կորդինացում:

7. Գույքի, նյութական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների հավաքագրման և օգտագործման աշխատանքների կորդինացում:

8. Տարհանման և տեղաբաշխման աշխատանքների կորդինացում:

9. Տարհանման և տարհանված բնակչության կենսաապահովման պլանների մշակման աշխատանքների կորդինացում:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**